«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 25 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



## *Բովանդակություն*


**Նախաբան**

1. Ուսումնական հաստատության գործունեությունը
   1.1 Դպրոցի առաքելությունը

1.2 Կրթական կարիքների նկարագրություն
1.3 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին
1.4 Դպրոցի գործունեության համապատասխանությունը իր ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին
2. Իրավիճակի վերլուծությունը. Ուժեղ և թույլ կողմերը
2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն
2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն
2.3 Ուսումնական հաստատության խորհրդի, խորհրդակցական մարմինների և տնօրենի համագործակցությունը
2.4 Ուսումնական հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ
2.5 Ուսումնական հաստատությունում օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների ու նորարարությունների ներկայացում
2.6 Ուսումնական հաստատությունում մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում
2.7 Ուսումնական հաստատությունում բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային համակարգի վերլուծություն
2.8 Ուսումնական հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն
2.9 Ուսումնական հաստատությունում ուսումնական նպատակով իրականացված ֆինանսական միջոցների վերլուծություն
3. Նպատակների և խնդիրների սահմանում
4. Հնարավոր ռիսկերը մեղմող գործողություններ
5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները
6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմը
7. Օգտագործված գրականության ցանկ

## Նախաբան

Այն, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք, վաղուց հայտնի է բոլորիս և այն ամրագրվել է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ ներպետական օրենդրությամբ: Այսօր պետությունը խթանում է կրթության և

գիտության զարգացումը, սահմանում պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը, ապահովելով բոլորի համար մատչելի համընդհանուր հիմնական կրթության համար անհրաժեշտ նախադրյալները:

Կրթության բովանդակությանը ներկայացվում են  ընդհանուր պահանջներ և այն հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը:

Կրթության մասին ՀՀ օրենքում որպես հանրակրթության հիմնական նպատակ՝ սահմանված է սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումը, մասնագիտական կողմնորոշումը, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը, ինչպես նաև ընդգծվում են հետևյալ հիմնահարցերը, որոնց դրական իրացումը միայն կարող է ապահովել համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորմանը՝

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը,

5) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության ծրագրի իրականացումը

6) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան և առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովումն է:

## *Ուսումնական հաստատության գործունեությունը*

Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի հիմքը թիվ 20 միջնակարգ դպրոցն է; 1979 թվականի նոյեմբերի 9-ին Կիրովականի թիվ 20 երկարօրյա դպրոցի հիմքի վրա հիմնադրվել է Վանաձորի թիվ 20 միջնակարգ դպրոցը և տեղափոխվել Վանաձորի Բազում թաղամասի նորակառույց դպրոց: Շուտով թաղամասում շահագործման հանձնվեցին բազմաթիվ բնակելի շենքեր և բնակչության խտացման արդյունքում անհրաժեշտություն առաջացավ կառուցել ևս մեկ դպրոց: 1988 թվականի հոկտեմբերի 17-ին շահագործման հանձնվեց թիվ 25 միջնակարգ դպրոցի շենքը; Սակայն 1988 թվականի երկրաշարժը խափանեց դպրոցների բնականոն աշխատանքը: Քանդվեց թիվ 20 դպրոցի երկրաշարժից վնասված մասնաշենքը և այն սկսեց գործել թիվ 25 դպրոցի շենքում:

1995 թվականի սեպտեմբերի 1-ին դպրոցները միավորվեցին, իսկ 2002 թվականից դպրոցը կոչվեց մեծանուն աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի անունով: 2013-2014 ուսումնական տարվանից դպրոցը հիմնական է:



Ինձ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս կտակում եմ տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից, անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ և գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:

Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզու: Գիտցեք, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը:

Վ. Համբարձումյան



Դպրոցն իրավունք ունի իրականացնելու տարրական և հիմնական ընդհանուր կրթական ծրագրեր՝ աշակերտների ներքոհիշյալ թվաքանակով.

- տարրական հանրակրթական ծրագիր – 430 (լիցենզիա - Սերիա Ա № 0264) ,
- հիմնական հանրակրթական ծրագիր - 580 (լիցենզիա - Սերիա Ա № 0258) ,
- նախադպրոցական կրթական ծրագիր – 27 (լիցենզիա – սերիա Ա № 0510, տրված 2018թ. սեպտեմբերի 10)

Դպրոցի նախագծային հզորությունը՝ 1200 աշակերտ:

Դպրոցի անձնակազմը այս պահին կազմված է  հոգուց, որից

- վարչական աշխատողներ՝ 3,
- ուսուցիչներ՝ 45,
- հաստիքային մանկավարժներ՝ 14,
- ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ՝ 20,

Սովորողների նախատեսված սահմանային թիվը՝ 1010 է:

Ներկայումս  դպրոցում սովորում է  837 աշակերտ:

Նախակրթարանում սովորում է 27 սան:

Հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Վ. Համբարձումյան 2

Էլ. հասցե՝ vanadzor25@schools.am

Կայք՝ https://vanadzor25.schoolsite.am/

Հեռախոս՝ +322 50692

## Դպրոցի առաքելությունը

**Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցն իր գործունեության ընթացքում հիմվում է իր առաքելության վրա, այն է՝**

- Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք և այդ իրավունքը իրացնել ժողովրդավարական և աշխարհիկ բնույթով,
- հաստատությունում ձևավորել հանրակրթության հավասար հնարավորություններ և մատչելիություն՝ շեշտը դնելով անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնության վրա,
- ապահովել սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման, փաստերի և դեպքերի ընդհանրացման ունակությունների զարգացումը,
- ձևավորել ուսումնական բարենպաստ և արդյունավետ մոտիվացնող կրթական միջավայր՝ շեշտը դնելով նոր մարտահրավերներին դիմակայող և նորարար սերունդ կրթելու և դաստիարակելու գործընթացի վրա,
- կարևորել յուրաքանչյուր անհատի արժանապատվությունը՝ թե՛ աշխատանքային, թե՛ ուսումնական հարաբերություններում:

**Ուսումնական հաստատության** նպատակն է՝

- յուրաքանչյուր սովորողի համար ապահովել գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագությանը, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրմանը, ազգային և համաշխարհային կրթական պահանջներին համապատասխան կրթության կազմակերպումը,
- յուրաքանչյուր սովորողի համար ապահովել իր հնարավորություններին, ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու հնարավորություն՝ հիմվելով խելամիտ հարմարեցումների վրա,

- ✓ իրականացնել չափորոշչահեն կրթություն, ուշադրության կենտրոնում պահելով հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման աշխատանքները,
- ✓ մանկավարժական կոլեկտիվում ձևավորել ժողովրդավարական և համագործակցային աշխատանքային մթնոլորտ, խրախուսել մանկավարժների ինքնակրթվելու, ստեղծագործելու նախաձեռնողականությանը,
- ✓ ապահովել առանց բուլինգի կրթական միջավայր՝ նպաստելով սովորողների սոցիալ-հոգեբանական, բարոյական առողջ կայացմանը:

## Կրթական կարիքների նկարագրություն

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Գիտատեխնիկական առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային կրթական կարիքները անընդհատ վերակառուցվում են: Երբեմնի արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության: Անընդհատ փոփոխվում է պահանջարկը, նորովի կազմավորվում և վերաբաշխվում են կրթական կարիքները:

Կրթության դերն աճում է, միաժամանակ, կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և այլ արժեքային որակներ: Հենց վերոնշյալ պատճառներն են դպրոցին հանգեցնում գտնել նպատակային լուծումներ կրթական կարիքների բավարարման ուղղությամբ;

Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի կրթական կարիքները ներառում են հետևյալ բաղադրիչները՝

- ✓ ապահովել ինչպես ազգային առանձնահատկություններով այնպես էլ համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, մշակութային, քաղաքացիական դիրքորոշում ունեցող սովորողների ուսուցման գործընթացը,

- ✓ գործընկերային և համագործակցային աշխատանքի կազմակերպում՝ կրթության արդյունավետության բարձրացման նպատակով,
- ✓ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար կրթական միջավայրում տրամադրվող խելամիտ հարմարեցումների և աջակցող տեխնոլոգիաների ապահովում,
- ✓ չափորոշչահեն կրթության իրականացում և հանրակրթության պետական նոր չափորոշչի պատշաճ ներդրման ապահովումը,
- ✓ խթանել յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական, քննադատական, նորարարական մտածողության զարգացմանը,
- ✓ կրթության որակը բարելավելու նպատակով ուսուցման նորարական մոտեցումների և նոր առավել արդյունավետ մեթոդների ներդրում,
- ✓ ապահովել մասնագիտորեն կողմնորոշված, համակողմանիորեն զարգացած, ինքնուրույն կյանքին պատրաստ շրջանավարտների թողարկումը,
- ✓ ՏՀՏ միջոցների շարունակական կիրառությունը ուսումնական գործընթացում,
- ✓ արտադասարանական նախընտրելի խմբակների ծավալի ընդլայնում;

Վերոնշյալ գործողությունների հաջորդական իրականացումը նպաստում է համակողմանի և ներդաշնակ զարգացած անձի ձևավորմանը, կրթական կարիքների բարելավումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը:

## Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին

§ՀՀ Լոռու մարզի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց¦ ՊՈԱԿ-ը իր գործունեությունը ծավալում է ելնելով պետության կրթական քաղաքականության միտումներից՝ սահմանված իրավական ակտերի հիման վրա: Կրթական քաղաքականության միտումները սահմանված է համապատասխան օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում՝ §Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքում, §Երեխայի իրավունքների մասին¦ օրենքում, §Կրթության մասին պետական ծրագրում¦, հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության մեջ և այլ օրենքներում և կարգերում:

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության՝ դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է: Գործունեությունը հիմնվում է ուսումնական և աշխատանքային գործունեության մատչելիության, մարդասիրության, ժողովրդավարության սկզբունքների վրա:

§Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքում սահմանված է առանցքային հետևյալ գաղափարը՝ Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը. հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:

Զարգացման ծրագրի հիմքը պետական քաղաքականության միջոցով իրականացնել սովորողների կրթական կարիքների ապահովումը: Ներկայումս հանրակրթությունն ապրում է բարեփոխումների շրջան: Հանրակրթության նոր չափորոշչի և ծրագրերի ներդրումն ինքնին միտված է ուսումնական բնագավառներով մասնավորեցված ուսուցման սկզբունքներին, այլ կերպ ասած՝ բուն առարկայական մանկավարժությանը: Նոր չափորոշիչը տալիս է առարկայական զգալի ազատություն և սահմանում է փոքրաթիվ պարտադիր առարկաներ:

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոցի գործունեությունը տարիներ շարունակ հիմնվել է պետական

քաղաքականության միտումներով պայմանավորված գործունեության վրա և պահպանելու է այդ սկզբունքի իրականացումը:

## Դպրոցի գործունեության համապատասխանությունը իր ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

### Դպրոցի շենքի ֆիզիկական պայմանները

Դպրոցի շենքը բաղկացած է 4 մասնաշենքից: Դպրոցում առկա են 30 դասասենյակ, գրադարան, համակարգչային 2 սենյակ, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, ՆԶՊ կաբինետ, զենքի պահեստ, ներառական կրթության 2 ռեսուրս սենյակ, հոգեբանի կաբինետ, տեխնոլոգիայի կաբինետ, բուժկետ, ճաշարան: Տարիներ շարունակ դպրոցում խնայված միջոցների հաշվին, ինչպես նաև այլ ծրագրերի մասնակցելու և հաղթելու, բարերարների ներգրավման արդյունքում վերանորոգվել են դպրոցի մասնաշենքերը:

Դպրոցի մարզադահլիճը հիմնանորոգվել է «Մանկական լիգա» սպորտային հեռուստանախագծի առաջին եթերաշրջանի մրցույթում հաղթող ճանաչվելու արդյունքում: Դպրոցում գործում են «Սմարթ» դասասենյակ, «Արմաթ» լաբորատորիա: ՄԱԿ-ի պարենային ծրագրի կողմից հիմնանորոգվել է դպրոցի ճաշարանը, ապահովվել համապատասխան գույքով: Դպրոցը ամբողջությամբ ջեռուցվում է:

| Դպրոցի մարդկային ռեսուրսները | |
|---|---|
| Վարչական աշխատողներ | 3 |
| Տնօրեն | 1 |
| Տնօրենի տեղակալ | 1 |
| ՄԿԱ գծով տեղակալ | 1 |
| Մանկավարժական աշխատողներ | |
| Ուսուցիչներ | 45 |

| | |
|---|---|
| ✓ Տարակարգ ունեցող ուսուցիչներ | 6 |
| ✓ Կամավոր ատեստավորված ուսուցիչներ | 12 |
| ✓ Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ | 3 |
| ✓ Բարձրագույն որակավորմամբ ուսուցիչներ | 45 |
| Զինղեկ | 1 |
| Հոգեբան | 1 |
| Հատուկ մանկավարժ | 1 |
| Սոցիալական մանկավարժ | 1 |
| Լաբորանտ | 1 |
| Գրադարանավար | 1 |
| Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ | 1 |
| Ուսուցչի օգնական | 7 |
| **Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ** | 20 |
| Տնտեսվար | 1 |
| Հաշվապահ | 1 |
| Գործավար | 1 |
| Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ | 1 |
| Հավաքարար | 5 |
| Խոհարար | 6 |
| Ընթացիկ նորոգող և սպասարկող մասնագետ | 1 |
| Պահակ | 4 |

Ա

Ա

Ա

շակե
րտա
կան
համ

ակազմ

| IԱ | IԲ | IԳ | IIԱ | IIԲ | IIԳ | IIIԱ | IIIԲ | IIIԳ | IVԱ | IVԲ | IVԳ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | 26 | 31 | 28 | 29 | 30 | 31 | 32 | 32 | 30 | 29 | 30 |

| VԱ | VԲ | VԳ | VIԱ | VIԲ | VIԳ | VIIԱ | VIIԲ | VIIԳ | VIIIԱ | VIIIԲ | VIIIԳ | VIIIԳ | IXԱ | IXԲ | IXԳ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 35 | 34 | 33 | 27 | 30 | 29 | 34 | 34 | 34 | 25 | 28 | 31 | 28 | 26 | 29 | 30 |

## Խորհրդակցական մարմիններ




Դպրոցում ուսումնական և դաստիարակչական գործընթացների լիարժեք կազմակերպելուն նպաստում են ներդպրոցական խորհրդակցական մարմինները, որոնք իրականացնում են կանոնակարգված և համակցված աշխատանք՝ ի նպաստ սովորողի: Դպրոցում գործում են հետևյալ խորհրդակցական մարմինները՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական և աշակերտական խորհուրդներ:

Հաստատության խորհրդակցական մարմինների աշխատանքները կազմակերպվում է սահմանված կարգին և օրենքի համապատասխան, իսկ

իրավասությունները սահմանվում են համաձայն հաստատության կանոնադրության:

**Մանկավարժական խորհուրդը** կազմված է 63 անդամներից: Խորհուրդը համալրված է բանիմաց, ստեղծագործող, նորարար մանկավարժներով: Մանկավարժական խորհրդի անդամները բարեխղճորեն և պարտաճանաչ կերպով իրականացնում են իրենց իրավասությունների սահմանում իրենց վերապահված պարտականությունները: Մանկավարժական խորհուրդը իրականացնում է հանրակրթական ծրագրերի, նախագծերի քննարկումներ, առաջարկությունների ներկայացում: Մանկավարժական խորհուրդը ղեկավարում է տնօրենը:

**Աշակերտական խորհուրդը** կազմված է 13 անդամներից: Աշակերտական խորհուրդը աջակցում է աշակերտներին իրենց մտահոգությունների, կարծիքների, առաջարկությունների ներկայացման հարցում: Աշակերտական խորհուրդն աչքի է ընկնում ակտիվ գործունեությամբ ինչպես առօրյայում, այնպես էլ տոնական և հիշատակման օրերին կազմակերպված միջոցառումներով:

**Ծնողական խորհուրդը** կազմված է 28 անդամներից: Ծնողական խորհուրդը ապահովում է ընտանիք-մանկավարժ փոխհարաբերությունների բնույթը և պայմանավորված է ծնողների՝ դպրոցի հանդեպ վերաբերմունքով: Տարբեր ծնողներ տարբեր կերպ են տեսնում դպրոցում կրթական, դաստիարակչական գործընթացի մեջ իրենց դերը, տարբեր ինտելեկտուալ մակարդակ ունեն և տարբեր դաստիարակություն են տալիս իրենց երեխաներին: Այդ պատճառով էլ ընտանիքի, ծնողի հետ համագործակցությունը պետք է հիմնվի տարբերակված մոտեցման վրա: Այն հարցերը, որոնք հավասարապես հուզում են բոլոր ծնողներին կարելի է քննարկման դնել ծնողական խորհրդի կողմից հրավիրված ժողովներում:

Ծնողական խորհուրդը ակտիվ համագործակցում է տնօրենի ՄԿԱ տեղակալի, դասղեկների, տնօրենի հետ արտադպրոցական և ներդպրոցական միջոցառումների կազմակերպման հարցերում:

**Առարկայական մեթոդական միավորումները** ձևավորվում են համապատասխան հաստատության կանոնադրության: Դպրոցում գործում են թվով 5 մեթոդական միավորումներ՝

- ✓ Բնագիտամաթեմատիկական մեթոդական միավորումը,
- ✓ Օտար լեզուների մեթոդական միավորումը,
- ✓ Հայոց լեզվի, գրականության, պատմության և հասարակագիտության մեթոդական միավորումը,
- ✓ Տեխնոլոգիա, երաժշտություն, կերպարվեստ,ֆիզկուլտուրա, շախմատ և ՆԶՊ առարկաների մեթոդական միավորումը,
- ✓ Տարրական կրթության մեթոդական միավորումը:

Մեթոդական միավորումները պարբերաբար կազմակերպում են քննարկումներ, հանդես գալիս առաջարկություններով և նախաձեռնություններով:

## 2. Իրավիճակի վերլուծությունը. Ուժեղ և թույլ կողմերը

| Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| ✓ Հիմնովին վերանորոգված SMART դասասենյակ:<br>✓ Դպրոցի նկուղային հարկը արտակարգ իրավիճակներում որպես փոքրիկ ապաստարան օգտագործելու հնարավորություն:<br>✓ Վերանորոգված ճաշարան՝ իր գույքով և տեխնիկայով:<br>✓ Հարմարեցված ԱՐՄԱԹ լաբորատորիա<br>✓ Ընթացիկ իրականացվել են մասնակի շինարարական և բարեկարգման աշխատանքներ:<br>✓ Դպրոցի մուտքը և 1 սանհանգույց հարմարեցված են հատուկ կարիքով երեխաների համար: | ✓ Դպրոցի տանիքի որոշակի հատվածների փոխարինում:<br>✓ Կապիտալ վերանորոգման կարիք ունի միջոցառումների դահլիճը:<br>✓ Կարիք կա դպրոցի հիմնանորոգման:<br>✓ Կարիք կա հանդիսությունների դահլիճի նորոգման և ջեռուցման: Դահլիճն անհնար է օգտագործել նոյեմբերից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածում: |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Էներգիայի ստացման այլընտրանքային միջոցների տեղադրում՝ արևային կուտակիչների միջոցով:<br>✓ Դպրոցի մասնաշենքերում շարժունակության դժվարություններ ունեցող երեխաների տեղաշարժը հնարավոր դարձնելու համար խելամիտ հարմարեցումների ստեղծում: | ✓ Ֆինանսավորման աղբյուրներ գտնելու հետ կապված խնդիր: |

| Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Դպրոցն ունի առարկայական կաբինետներ՝ ՆԶՊ, տեխնոլոգիա, ինֆորմատիկա:<br>✓ Դպրոցն ունի ներառական կրթության 2 ռեսուրս սենյակ՝ համալրված անհրաժեշտ գույքով:<br>✓ Դպրոցում կա հոգեբանի հիմնանորոգված կաբինետ՝ անհրաժեշտ ախտորոշիչ և վերականգնողական գույքով:<br>✓ Մարզադահլիճն ապահովված է անհրաժեշտ մարզագույքով, մարզադահլիճը և հանդերձարանները ջեռուցվում են:<br>✓ Դասասենյակները համալրված են անհրաժեշտ գույքով:<br>✓ Դպրոցում կա բուժկետ՝ ապահովված առաջին օգնության համար անհրաժեշտ նյութերով: | ✓ Կարիք կա համակարգչային ֆոնդի թվաքանակի մեծացման և առկա տեխնիկայի թարմացման:<br>✓ Անհրաժեշտ է գրադարանային ֆոնդը համալրել նոր տպագրված գրքերով:<br>✓ Անհրաժեշտ է բնագիտական առարկաների լաբորատորիաների կահավորում և ուսումնական նյութերի համալրում:<br>✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին տրամադրվող խելամիտ հարմարեցումների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում: |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Առավել բարենպաստ և ակնառու նյութատեխնիկայով զինված կրթական միջավայրի ստեղծում: | ✓ Ֆինանսական միջոցների սահմանափակ լինելը:<br>✓ Գույքի վնասում, անսարքություն: |

| Ուսումնական հաստատության խորհրդի, խորհրդակցական մարմինների և տնօրենի համագործակցությունը | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| ✓ Դպրոցի խորհուրդն իր իրավասությունների շրջանակում իրականացնում է վերահսկիչ դեր, ամբողջացնելով աջակցություն-հսկողություն կապի ապահովման օղակը և իր գործունեությունն իրականացնում է ի շահ դպրոցի:<br>✓ Մանկավարժական խորհրդի նիստերում մշտապես քննարկվում են դպրոցում իրականացվող տարբեր աշխատանքները, ներկայացվում են առաջարկություններ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար:<br>✓ Ծնողական խորհրդի հանդիպումների արդյունքում ամրապնդվում է դպրոց-ընտանիք կապը: Հանդիպումների ժամանակ վեր են հանվում հնարավոր խնդիրները և փորձում դրանց համար ճիշտ ժամանակին լուծումներ առաջարկել:<br>✓ Աշակերտական խորհրդի հետ իրականացվող հանդիպումների ժամանակ վեր են հանվում | ✓ Կապված ծայրամասային թաղամաս լինելու հանգամանքով դպրոց-ծնող կապը մեծ դժվարությամբ է իրականացվում:<br>✓ Ծնողները և աշակերտները ոչ միշտ են հանդես գալիս նախաձեռնող իրատեսական առաջարկություններով: |

| | |
|---|---|
| աշակերտների շրջանում առաջացած խնդիրները, դժվարությունները: Առաջարկվում են լուծման ուղիներ:<br>✓ Առարկայական մեթոդական միավորումները նիստերի ժամանակ քննարկում են առարկայական ծրագրերի, դասավանդման մեթոդների և հնարների կիրառման հետ առաջացած դժվարությունները, ներկայացնում առաջարկություններ տնօրենին և մանկավարժական խորհրդին:<br>Հաստատությունում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելիս հաշվի են առնվում խորհրդակցական մարմինների նկատառումները և առաջարկությունները: | |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Խորհրդում և խորհրդակցական մարմիններում բարձր մասնագիտական որակավորում և փորձ ունեցող անդամների կողմից ներկայացված առաջարկությունները համագործակցային ձևով լուծելու հնարավորություն:<br>✓ Ակտիվ սոցիալ-հոգեբանական փոխգործուն միջավայր ստեղծելու հնարավորություն: | ✓ Ծնողական խորհրդի անդամների կողմից նախաձեռնողականության բացակայություն և աշխատանքային պասիվություն: |

| Ուսումնական հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Ուսումնական հաստատությունն իր ամենօրյա գործունեության ընթացքում համագործակցում է՝<br>➢ ԿԳՄՍՆ-ի հետ,<br>➢ Լիազոր մարմնի՝ ՀՀ Լոռու մարզպետարանի հետ,<br>➢ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ,<br>➢ Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ,<br>➢ Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի հետ,<br>➢ «Այբ» հիմնադրամի հետ,<br>➢ Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի հետ,<br>➢ Ոստիկանության տարածքային բաժնի հետ, | ✓ Առավել ակտիվ համագործակցության համար ռեսուրսների սակավություն:<br>✓ Մշակութային կենտրոնների կողմից համագործակցության նախաձեռնողականության պակաս:<br>✓ Ծնողների կողմից արտադասարանական միջոցառումներին մասնակցելու ցանկության բացակայություն՝ կապված ժամանակի սուղ լինելով: |

| | |
|---|---|
| ➢ Արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ,<br>✓ Հաստատությունն իր ամենօրյա գործունեության ընթացքում համագործակցում է համայնքապետարանի, տարբեր մշակութային և գեղագիտական կենտրոնների հետ: Դպրոցը մասնակցում է համաքաղաքային բոլոր միջոցառումներին:<br>✓ Հաստատության համագործակցությունը ծնողական համայնքի հետ միտված է սովորողների արտադպրոցական և արտադասարանական միջոցառումների և կրթական ժամանցի կազմակերպմանը: Պարբերական աշխատանքներ են իրականացվում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: | |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Շարունակական ակտիվ համագործակցություն լիազոր մարմնի հետ:<br>✓ Համայնքի կողմից իրականացվող միջոցառումներին մեծ | ✓ Ժամանակային ռեսուրսների սակավություն: |

| | |
|---|---|
| շահագրգռվածությամբ մասնակցություն:<br>✓ Լիազոր մարմնի և համայնքի կողմից տարբեր խրախուսման միջոցների կիրառում: | |

## Ուսումնական հաստատությունում օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների ու նորարարությունների ներկայացում

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ✓ Դպրոցում գործում է Արմաթ լաբորատորիա, որտեղ սովորողները մեծագույն հաճույքով աշխատում են տարբեր նախագծերի վրա:<br>✓ Դպրոցում կա կահավորված Սմարթ դասասենյակ:<br>✓ Դպրոցի համակարգչային բոլոր կաբինետներն ապահովված են ինտերնետ կապով:<br>✓ Մանկավարժների գերակշիռ մասը կարողանում է կիրառել ՏՀՏ տարբեր միջոցներ դասավանդման ընթացքում | ✓ Մեդիագրագիտության ցածր մակարդակ:<br>✓ ՏՀՏ նոր միջոցների կիրառման առանձնահատկությունների յուրացման դժվարություններ:<br>✓ ԹԳՀԳ առարկայի ներդրմամբ պայմանավորված նյութատեխնիկական բազայի սակավություն:<br>✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված խելամիտ հարմարեցումների շրջանակում պլանշետների ձեռքբերում: |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |

| | |
|---|---|
| ✓ Թղթային պաստառների փոխարինում էլեկտրոնային գրատախտակի միջոցով ցուցադրվող քարտեզների, մակետների միջոցով: | ✓ ՏՀՏ միջոցների կիրառման անհնարինություն՝ կապված ինտերնետի բացակայության և սարքավորման հետ կապված խնդիրների պատճառով: |

| Ուսումնական հաստատությունում մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Դպրոցում աշխատում են 45 ուսուցիչներ և բոլորն ունեն մասնագիտական կրթություն: Ուսուցիչներից 6-ը ունեն տարակարգեր: Կամավոր ատեստավորվել են 12 ուսուցիչներ:<br>✓ Դպրոցի բազմամասնագիտական թիմը կազմված է 7 ուսուցչի օգնականից, հեգեբանից, հատուկ մանկավարժից և սոցիալական մանկավարժից: Վերջիններս ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և մասնակից են մի շարք վերապատրաստման | ✓ Խրախուսման նյութական համակարգի բացակայություն:<br>✓ Ինքնակրթության ձգտումի ցածր աստիճան: |

| | |
|---|---|
| դաընթացների:<br>✓ Մանկավարժները իրենց աշխատանքային և թեմատիկ պլանները կազմում են ելնելով ԿԳՄՍՆ պահանջներից, հիմնվելով առարկայական ծրագրերի և չափորոշիչների վրա:<br>✓ Յուրաքանչյուր տարի կազմակերպվում է հերթակա ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում:<br>✓ Նորեկ ուսուցիչներին աջակցության տրամադրում փորձառուների կողմից:<br>✓ Միջառարկայական կապերը պահպանելով կազմակերպվում են համակցված դասեր, նախագծային աշխատանքներ: | |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Ուսուցիչների միջև համագործակցային կապերի ստեղծումը հաղորդակցության և փոխգործակցության միջոցով:<br>✓ Ուսուցիչների և աջակցող թիմի համագործակցային աշխատանքը:<br>✓ Մանկավարժների ինքնակրթության և նախաձեռնողականության խթանում: | ✓ Ուսուցիչներին ներկայացվող պահանջներում չափից շատ փաստաթղթային աշխատանքների պահանջը:<br>✓ Ժամանակի սակավ լինելը:<br>✓ Խրախուսման միջոցների բացակայությունը առաջացնում է անտարբերություն և հիասթափություն: |
| | |

| Ուսումնական հաստատությունում չափորոշչային պահանջին համապատասխան կրթության որակի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Ուսումնական գործընթացը հաջողությամբ կազմակերպելու համար ուսուցիչները մշտապես ուսումնական գործընթացը կազմակերպում են՝ ելնելով առարկայական ծրագրերից և չափորոշչային պահանջներից:<br>✓ Հանրակրթական պետական նոր չափորոշչով դասավանդվող դասարաններում՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ ուսումնական պլանները կազմված են համապատասխան նոր չափորոշչային պահանջներին: Մյուս դասարաններում պլանները համապատասխանում են ՀՊՉ-ին:<br>✓ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները, տնօրենը և տնօրենի տեղակալները մասնակցել են նոր ՀՊՉ –ի ներդրմանն ուղղված վերապատրաստումներին:<br>✓ Ընթացիկ՝ միավորային և ձևավորող, ամփոփիչ գնահատումներն իրականացվում են ՀՊՉ պահանջներին համապատասխան: | ✓ Ձևավորող գնահատման համակարգի ներդրման դժվարություններ՝ կապված բնութագրիչների հետ:<br>✓ Դասագրքերում տեղակայված QR կոդերի միջոցով աշխատանքի կազմակերպման դժվարություններ:<br>✓ 2-րդ դասարանում ԹԳՀԳ առարկայի չափորոշչային պահանջների դժվարությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ ստեղնաշարի վրա ամրացված տառերը անգլերեն են, իսկ երեխաները հայերեն գրելու համար չեն կարողանում օգտվել անգլերեն ստեղնաշարից: |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Նպաստել հանրակրթական պետական չափորոշչի հիման վրա կազմակերպվող արդյունավետ ուսուցմանը՝ կարևորելով երեխայի ակտիվությունը և նախաձեռնողականությունը: | ✓ Հանրակրթական պետական նոր չափորոշչի պահանջների ոչ ճիշտ ընկալում և, հետևաբար, գործնականում կիրառության դժվարություններ:<br>✓ Ուսուցիչների և երեխաների |

| | |
|---|---|
| | կողմից նոր պահանջներին հարմարվելու դժվարություններ: |

**Ուսումնական հաստատությունում բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային համակարգի վերլուծություն**

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ✓ Դպրոցում 2014 թվականից իրականացվում է ներառական կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ աշխատանքը նպատակային դարձնելու համար աջակցող թիմը համագործակցում է ուսուցիչների, ծնողների և ՎՏՄԱԿ աշխատակիցների հետ:<br>✓ Այս պահին դպրոցում աջակցություն են ստանում թվով 45 ԿԱՊԿ ունեցող աշակերտներ ֆունկցիաների տարբեր աստիճանների խանգարումներով:<br>✓ Դպրոցում տիրում է փոխօգնության, համագործակցության մթնոլորտ: Այդ մասին են վկայում համակցված դասերը, նախագծային աշխատանքները:<br>✓ Դպրոցում կառավարման ոճը ժողովրդավարական է, չափավոր խստության պայմաններում ակնհայտ է նուրբ պահանջկոտությունը: | ✓ Որոշ մանկավարժներ չեն ընդունում բազմակարծիք աշխատանքային միջավայրը և ցանկանում են ընդգծել իրենց թվացյալ առավելությունը:<br>✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին տրամադրվող խելամիտ հարմարեցումների պակասը: |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |

| | |
|---|---|
| ✓ Հավասար հնարավորությունների ստեղծում բոլոր սովորողների և մանկավարժների համար՝ բազմակարծության և ներառականության սկզբունքներից ելնելով:<br>✓ Նորարարական մոտեցումներով և գաղափարներով կրթական միջավայրի ապահովում: | ✓ Հավասար հնարավորությունների տրամադրման ոչ ճիշտ ընկալում:<br>✓ Հաճախ բազմակարծությունը առաջ է բերում կոնֆլիկտների ինչպես մանկավարժների, այնպես էլ աշակերտների շրջանում: |

| Ուսումնական հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| ✓ Դպրոցը որդեգրել է աշխատակիցների ձեռքբերումները հատուկ ընդգծելու, ներկայացնելու և գովասանքի արժանացնելու քաղաքականություն:<br>✓ Դպրոցում անձնակազմի յուրաքանչյուր անդամի մասնագիտական որակավորման բարձրացումը, կարողությունների զարգացման մոտիվացիան խրախուսվում է:<br>✓ Կրթական նոր տեխնոլոգիաների, հնարների, մեթոդների տիրապետմանն ուղղված վերապատրաստումներին մասնակցելու խրախուսում:<br>✓ Կամավոր ատեստավորված և տարակարգ ունեցող մանկավարժները համաձայն օրենքով հաստատված կարգի ստանում են հավելավճարներ յուրաքանչյուր ամիս | ✓ Դպրոցի բյուջեի խիստ սահմանափակ լինելը, նյութական խրախուսում տրամադրելու անհնարինությունը:<br>✓ Սեփական նախաձեռնությամբ վերապատրաստումների, որակավորման բարձրացման դասընթացների, կամավոր ատեստավորման մասնակցելու ցանկության բացակայություն: |

| | |
|---|---|
| իրենց աշխատավարձի հետ: | |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Մանկավարժների ձեռքբերումները լուսաբանելով՝ բարձրացնում ենք ուսուցչի դերը դպրոցում և հասարակության մեջ:<br>✓ Այլընտրանքային մեթոդներով բարձրացնել ուսուցիչների մոտիվացիան տարբեր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար: | ✓ Լրացուցիչ ֆինանսական ներդրումների բացակայություն: Վերապատրաստումների համար, առավելագույն արդյունք դրսևորող ուսուցիչների պարգևատրման, խրախուսման համար:<br>✓ Սեփական նախաձեռնությամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու, ինքնակրթվելու ցանկության բացակայություն: |

## Ուսումնական հաստատությունում ուսումնական նպատակով իրականացված ֆինանսական միջոցների վերլուծություն

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| ✓ Ուսումնական հաստատությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ կայուն և հստակ մեխանիզմներով:<br>✓ Ուսումնական հաստատության բյուջեի | ✓ Ուսումնական հաստատության բյուջեի ֆինանսների մեծ մասը տրամադրվում է աշխատողների աշխատավարձերի, կոմունալ |

| | |
| --- | --- |
| նախահաշիվը կազմելիս հաշվի է առնվում ֆինանսական միջոցների բաշխման առաջնահերթությունը:<br>✓ Բյուջեի ֆինանսական միջոցները առաջնահերթությամբ տրվում են աշխատավարձին և նրան հավասարեցված պետական վճարումներին, կոմունալ վճարումներին:<br>✓ Բյուջեից ֆինանսական հատկացումներ տրամադրվում են մասնագիտական աճին ուղղված ծախսերի, վերապատրաստումների համար:<br>✓ Հիմնական ֆինանսական ծախսերն ուղղված են գրասենյակային և տնտեսական ծախսերին, գույքի և սարքավորումների ձեռքբերմանը: | վճարների վճարմանը, ինչն անհնարին է դարձնում լրացուցիչ որևէ աշխատանքի կատարումը:<br>✓ Լրացուցիչ ծախսեր պահանջող աշխատանքների կազմակերպման դժվարություն:<br>✓ Ձեռնարկատիրական գործունեության բացակայություն: |
| **Հնարավորություններ** | **Վտանգներ** |
| ✓ Ֆինանսավորման այլ միջոցների՝ բարերարներին որոնում:<br>✓ Ըստ ուսումնական հաստատություններում ֆինանսավորման նոր կարգի՝ սկսած 2026թ. դասարաններում աշակերտների խտության նվազմամբ դպրոցում զգալիորեն կավելանա դասարնների թիվը և հետևաբար կավելանա ֆինանսավորման չափը:<br>✓ Կրթական ոլորտի աշխատողների | ✓ Լրացուցիչ ֆինանսական ներդրումների բացակայություն :<br>✓ Նախահաշվում տեղ չգտած որոշակի ծախսեր իրականացնելու անհրաժեշտություն: |

| | |
|---|---|
| սոցիալական երաշխիքի ավելացում՝ պարգևատրելով լավագույն արդյունք ցուցաբերած ուսուցիչներին: | |

## 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

| | *բարձրացում* |
|---|---|
| **Խնդիր 1** | Կրթության որակի բարձրացում՝ ելնելով ՀՊՉ պահանջներից: |
| Գործողություններ | Կրթական գործընթացի պլանավորում, ուսումնական պլանի մշակում: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, առարկայական մեթոդական միավորումների նախագահներ, ուսուցիչներ: |
| Միջոցներ | Առարկայական ծրագրերի և ՀՊՉ ճիշտ կիրառում, ՏՀՏ գործիքներ, դասավանդման նորարական մեթոդներ: |
| Գնահատման չափանիշներ | Համապատասխանություն ուսումնական ծրագրի և կրթական նպատակների միջև՝ ելնելով ՀՊՉ պահանջներից: |
| Վերահսկողություն | Պարբերաբար իրականացնել վերահսկողական աշխատանքներ: |
| Ռիսկեր | Թեմատիկ պլանի և ծրագրի անհամապատասխանություն: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Խնդիր 2** | Կրթության հանդեպ հետաքրքրության և շահագրգռվածության բարձրացում: |
| Գործողություններ | Ուսուցման և զարգացման ողջ գործընթացում նոր մեթոդների, հնարների, միջոցների և տեխնոլոգիաների կիրառում: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, առարկայական մեթոդական միավորումների նախագահներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ: |
| Միջոցներ | ՏՀՏ գործիքներ, նորագույն տեխնոլոգիաների, միջոցների կիրառություն: |
| Գնահատման չափանիշներ | Դասավանդման նորարարական մեթոդների ներդրում: |
| Վերահսկողություն | Հետադարձ կապի ապահովում՝ ուսուցիչ-աշակերտ համագործակցության մեջ: |
| Ռիսկեր | Մասնագիտական, մեթոդական կարողությունների անհամապատասխանությունը դրված նպատակին հասնելու համար իրականացվող գործողությունների կիրառման ժամանակ: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Խնդիր 3** | Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողությունների, հմտությունների բարձրացմանն ուղղված աշխատանքներ: |
| Գործողություններ | 1.Տարբեր վերապատրաստող կազմակերպությունների և կրթական կառույցների կողմից կազմակերպվող մասնագիտական աճին միտված դասընթացներին մասնակցելու ցանկության խրախուսում:<br>2.ՎՏՄԱԿ կողմից տրամադրվող խորհրդատվությունների միջոցով հավասար հնարավորություններ տրամադրելու կարողության ձեռքբերում:<br>3.Մշակել կանոնավոր մասնագիտական զարգացման ծրագիր: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, առարկայական մեթոդական միավորումների նախագահներ, ուսուցիչներ, ուսուցչի օգնականներ, բազմամասնագիտական թիմ, վերապատրաստող կազմակերպություններ: |
| Միջոցներ | ՏՀՏ, թրեյնինգներ, կլոր-սեղան քննարկումներ, գործնական |

| | |
|---|---|
| | աշխատանքներ: |
| Գնահատման չափանիշներ | Ձեռք բերած գիտելիքների գործնականում կիրառություն: |
| Վերահսկողություն | Դասարանական դիտարկումներ,<br>Հարցումներ աշակերտների-ծնողների շրջանում ուսուցչի կարողությունների և դասավանդման մեթոդիկաների փոփոխությունների վերաբերյալ: |
| Ռիսկեր | Վերապատրաստման դասընթացների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ տրամադրելու դժվարությունը, ուսուցիչների ժամանակի սակավ լինելը: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Խնդիր 4** | Սովորողների ակադեմիական գիտելիքների, հմտությունների, կարողությունների և դրանց գործնականում կիրառման ունակության զարգացում : |
| Գործողություններ | 1.Ուսուցիչների և սովորողների խրախուսում՝ գիտելիքների ձեռքբերման մոտիվացիայի բարձրացմանն ուղղված լրացուցիչ աշխատանքներ իրականացնելիս:<br>2. .Մրցույթների, վիկտորինաների մասնակցություն՝ թե՛ սովորողների, և թե՛ ուսուցիչների կողմից:<br>3. Ներգրավելով աշակերտական խորհրդին կազմակերպել միջդպրոցական վիկտորինաներ՝ աշակերտների գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունը զարգացնելու համար: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, առարկայական մեթոդական միավորումների նախագահներ, ուսուցիչներ, աշակերտական խորհուրդ: |
| Միջոցներ | ՏՀՏ, էլեկտրոնային գրատախտակ, խմբային աշխատանք: |
| Գնահատման չափանիշներ | Գործնականում խմբային աշխատանքի կազմակերպում, մրցակցային մթնոլորտի պահպանում: |
| Վերահսկողություն | Հետադարձ կապի պահպանում: Մշտական համագործակցությունը պահպանելուն ուղված աշխատանքների կազմակերպում: |
| Ռիսկեր | Ցանկության բացակայություն: Ուսուցիչների և սովորողների անտարբերություն: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 2** | **Ուսումնական հաստատության շենքային պայմանների բարեկարգում** |
| **Խնդիրներ** | ✓ Դպրոցի տանիքի որոշակի հատվածների փոխարինում:<br>✓ Միջոցառումների դահլիճի բարեկարգում, հնարավորության դեպքում հիմնանորոգում: |
| Գործողություններ | Դպրոցի կառավարման խորհրդին ներկայացնել հիմնախնդիրը, իրականացնել քննարկում: Քննարկման արդյունքում ստեղծված նախագիծը ներկայացնել վարչատնտեսական համակարգողին: |
| Պատասխանատուներ | Լիազոր մարմին՝ ՀՀ Լոռու մարզպետարան, կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ: |
| Միջոցներ | Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներ, բարեգործական միջոցների ներգրավում: |
| Գնահատման չափանիշներ | Ուսումնական հաստատության վարչատնտեսական |

| | |
|---|---|
| | համակարգողի, կառավարման խորհրդի կողմից տրված նախագծային եզրակացության և ընթացիկ իրավիճակի համապատասխանության ստուգում: |
| Վերահսկողություն | Ֆինանսական ծախսերի նախահաշվի կազմում, ընթացիկ վիճակի մշտադիտարկում, կատարված աշխատանքների վերահսկում և իրազեկում համապատասխան պատվիրատուներին: |
| Ռիսկեր | Անհրաժեշտ աշխատանքների և առկա ֆինանսական միջոցների անհամապատասխանություն: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 3** | ***Բնագիտական առարկաների լաբորատորիաների ստեղծում*** |
| **Խնդիրներ** | Լաբորատորիաների (քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, աշխարհագրություն) վերանորոգում, լաբորատոր գույքի, նյութերի ձեռքբերում: |
| Գործողություններ | Ընդգրկվել դպրոցների բնագիտական առարկաների լաբորատորիաների վերազինման պետական ծրագրում: Անհրաժեշտության դեպքում վարչատնտեսական համակարգողի հետ քննարկմամբ որոշակի ծախսեր կատարվի դպրոցի բյուջեի հաշվին: |
| Պատասխանատուներ | Լիազոր մարմին՝ ՀՀ Լոռու մարզպետարան, տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ, բնագիտական առարկաների ուսուցիչներ: |
| Միջոցներ | Բնագիտական առարկաների լաբորատորիաների վերազինման պետական ծրագրի ֆինանսական միջոցներ:<br>Խիստ անհրաժեշտության դեպքում դպրոցի ֆինանսական միջոցներից որոշակի հատկացումներ: |
| Գնահատման չափանիշներ | Ուսումնական հաստատության վարչատնտեսական համակարգողի և տնօրենի կողմից մշտադիտարկումներ: |
| Վերահսկողություն | Ֆինանսական ծախսերի նախահաշվի կազմում, ընթացիկ վիճակի մշտադիտարկում, կատարված աշխատանքների վերահսկում և իրազեկում համապատասխան ծրագրի պատասխանատուին: |
| Ռիսկեր | Ֆինանսական ռեսուրսների անբավարարություն: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 4** | ***Ուսումնական հաստատության կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների համագործակցության և արդյունավետ նպատակային աշխատանքի կազմակերպում*** |
| **Խնդիր 1** | Աշակերտական խորհրդի և աշակերտական համակազմի ակտիվ համագործակցության կազմակերպում: |
| Գործողություններ | ✓ Աշակերտական խորհրդի հետ համագործակցելով կազմակերպել համադպրոցական միջոցառումներ, վիկտորինաներ:<br>✓ Կարևորելով աշակերտակենտրոն ուսուցումը և կառավարումը՝ ընդգծել աշակերտների առաջարկությունների կարևորությունը:<br>✓ Աշակերտական խորհրդի առօրյան արդյունավետ դարձնելու համար համագործակցել քաղաքի մյուս դպրոցների աշակերտական խորհուրդների հետ: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, ԴԱԿ, |

| | |
|---|---|
| | դասղեկներ, աշակերտական խորհուրդ: |
| Միջոցներ | Հիմնվել ուսումնական հաստատությունում յուրաքանչյուր անձի ներուժի օգտագործման վրա: |
| Գնահատման չափանիշներ | Հետադարձ կապ ապահովելու համար կարելի է օգտագործել հարցաթերթիկներ, իրավիճակի վերլուծության աղյուսակներ: |
| Վերահսկողություն | Իրադրության պարբերական վերահսկողության ապահովում ՄԿԱ համակարգողի, ԴԱԿ- իս դասղեկների կողմից: |
| Ռիսկեր | Ռիսկերը կապված են միայն անձնային որակների, հոգեբանական հատկանիշների, շփման դժվարությունների հետ: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Խնդիր 2** | Ծնողական խորհրդի ներուժի օգտագործում ուսումնական հաստատություն առավել կառուցողական մթնոլորտի ստեղծման համար: |
| Գործողություններ | ✓ Դպրոց-ընտանիք փոխադարձ գործընկերային հարաբերությունների պահպանում:<br>✓ Ապահովել ծնողների ներգրավվածությունը աշակերտների ուսուցման և դաստիարակության գործում:<br>✓ Կիսամյակի ընթացքում 1 օր հայտարարել «Բաց դռների» օր ծնողների համար՝ թույլ տալով 1 ամբողջական օր դասարանի 1 ծնողի լինել դպրոցում, ներկա լինել աշակերտների հետ դասին և դասամիջոցին: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, ԴԱԿ, դասղեկներ, ծնողական խորհուրդ: |
| Միջոցներ | Մարդկային ռեսուրսներ, համագործակցային աշխատանքի մեթոդ: |
| Գնահատման չափանիշներ | Վերլուծել և գնահատել համագործակցության արդյունքները, ազդեցությունը՝ աշակերտների ուսուցման և դաստիարակության գործընթացի վրա: |
| Վերահսկողություն | Համագործոկցությունը և միջոցառումների իրականացումը դարձնել շարունակական: Կազմել հետագա պլաններ համագործակցության նպատակով: |
| Ռիսկեր | Մարդկայի ռեսուրսների, ցանկության և ժամանակի պակաս: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Խնդիր 3** | Առարկայական մեթոդական միավորումների մոտ թիմային, համագործակցային և կառուցողական աշխատանք կատարելու հմտության ձևավորում: |
| Գործողություններ | ✓ Առարկայական մեթոդական միավորումներում կազմակերպել աշխատանքը՝ խրախուսելով նախաձեռնողականությունը, կրեատիվ միտքը, իրականացման որակը և հաշվետվողականությունը:<br>✓ Ապահովել տարբեր առարկայական մեթդական միավորումների համագործակցային, համակցված աշխատանքը: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, ուսուցիչներ, առարկայական մեթոդական միավորումների նախագահներ: |
| Միջոցներ | Մարդկային ռեսուրսներ, համագործակցային աշխատանքի մեթոդ, ժամանակի տրամադրում, էլեկտրոնային կրիչներ: |
| Գնահատման չափանիշներ | Վերլուծել և գնահատել համագործակցության արդյունքները, առանձնացնել դրական և բացասական կողմերը: |

| | |
|---|---|
| Վերահսկողություն | Համագործակցությունը և համակցված աշխատանքը դարձնել կազմված պլանի մի մաս: |
| Ռիսկեր | Մարդկայի ռեսուրսների, ցանկության և ժամանակի պակաս: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 5** | **Նպաստել աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը** |
| Խնդիրներ | Աշակերտների ներդաշնակ զարգացման համար կարևորել դաստիարակության բոլոր տեսակների ներառումը ուսուցման և գործընթացի կազմակերպման գործընթացում: |
| Գործողություններ | ✓ §Էկո ակումբ¦-ի ստեղծում՝ դպրոցամերձ այգու, բանջարանոցի և էկո սենյակի ստեղծում (բնապահպանական դաստիարակություն):<br>✓ Ձեռնարկատիրական գործունեության իրականացում (աշխատանքային դաստիարակություն):<br>✓ Քաղաքի արվեստի և գիտության ականավոր գործիչների հետ հանդիպումների կազմակերպում, այցելություն տարբեր մշակութային կենտրոններ (գեղագիտական դաստիարակություն):<br>✓ Հայրենասիրական-ազգասիրական դաստիարակության խրախուսում: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ: |
| Միջոցներ | Մարդկային ռեսուրսներ, նյութատեխնիկական բազա, ֆինանսական միջոցներ: |
| Գնահատման չափանիշներ | Հետադարձ կապ ապահովելու համար կարելի է օգտագործել հարցաթերթիկներ, իրավիճակի վերլուծության աղյուսակներ: |
| Վերահսկողություն | Իրադրության պարբերական վերահսկողության ապահովում, մշտադիտարկումներ: |
| Ռիսկեր | Մարդկային ռեսուրսներ, ֆինանսական միջոցների ձեռքբերման դժվարություններ: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 6** | **Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար խելամիտ հարմարեցումների ստեղծում** |
| **Խնդիրներ** | ✓ Նոր դիդակտիկ պարագաների ձեռքբերում:<br>✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ընտանիքին տրամադրել մասնագիտական աջակցություն:<br>✓ Աջակցող թիմի մասնագիտական որակավորման բարձրացում: |
| Գործողություններ | Խելամիտ հարմարեցումներ տրամադրելու համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի ցանկը քննարկել վարչատնտեսական համակարգողի հետ: Հնարավորության դեպքում ձեռք բերել գույք:<br>Դպրոցի աջակցող թիմի, ՎՏՄԱԿ մասնագետների կողմից կազմակերպել համակարգված խորհրդատվություն ծնողների համար:<br>Տարբեր վերապատրաստող կազմակերպությունների և կրթական կառույցների կողմից կազմակերպվող մասնագիտական աճին միտված դասընթացներին մասնակցելու |

| | |
|---|---|
| | ցանկության խրախուսում: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, վարչատնտեսական համակարգող, ՄԿԱ համակարգող, աջակցող թիմ, ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ: |
| Միջոցներ | Մարդկային ռեսուրսներ, նյութատեխնիկական բազա, ֆինանսական միջոցներ: |
| Գնահատման չափանիշներ | Հետադարձ կապ ապահովելու համար կարելի է օգտագործել հարցաթերթիկներ, իրավիճակի վերլուծության աղյուսակներ: |
| Վերահսկողություն | Իրադրության պարբերական վերահսկողության ապահովում, մշտադիտարկումներ, հարցազրույցներ: |
| Ռիսկեր | Ժամանակային ոչ բավարար պայմաններ՝ մարդկային ռեսուրսներին ներգրավելու նպատակով, ցանկության բացակայություն:<br>Ֆինանսական սակավ միջոցներ: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 6** | **Գրադարանի բարեկարգում և արդիականացում** |
| Խնդիրներ | ✓ Սովորողների մոտ ընթերցանության նկատմամբ հետաքրքրվածության բարձրացում:<br>✓ Գրադարանային ֆոնդի համալրման կարիք:<br>✓ Բարեկարգ ընթերցասրահի և գրապահոցի անհրաժեշտություն՝ երեխա-գրադարան կապը գրավիչ դարձնելու նպատակով: |
| Գործողություններ | Գրադարանի բարեկարգման հարցը ներկայացնել ուսումնական հաստատության կառավարման խորհրդին, հավանություն ստանալու դեպքում աշխատանքները համապատասխանեցնել վարչատնտեսական համակարգողի հետ: Գրադարանում առկա գրականության ցանկի էլեկտրոնային պաշարների շտեմարանի ստեղծում: |
| Պատասխանատուներ | Լիազոր մարմին՝ ՀՀ Լոռու մարզպետարան, կառավարման խորհուրդ, տնօրեն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ: |
| Միջոցներ | Պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներ, բարեգործական միջոցների ներգրավում: |
| Գնահատման չափանիշներ | Ուսումնական հաստատության վարչատնտեսական համակարգողի, կառավարման խորհրդի կողմից տրված նախագծային եզրակացության և ընթացիկ իրավիճակի համապատասխանության ստուգում: Սովորողների մոտ ընթերցանության նկատմամբ հետաքրքրվածության ցուցանիշի բացահայտում: |
| Վերահսկողություն | Ֆինանսական ծախսերի նախահաշվի կազմում, ընթացիկ վիճակի մշտադիտարկում, կատարված աշխատանքների վերահսկում և իրազեկում համապատասխան պատվիրատուներին: |
| Ռիսկեր | Անհրաժեշտ աշխատանքների և առկա ֆինանսական միջոցների անհամապատասխանություն: |
| Ժամանակացույց | 2024-2029 թվականներ |
| **Նպատակ 7** | **Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքների և աշակերտների հարմարմանն ուղղված աշխատանքներ** |
| Խնդիրներ | ✓ Ծնողների ընդգրկում ծնողխորհրդի կազմում: |

| | |
|---|---|
| | ✓ Սովորողների ընդգրկում ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներում:<br>✓ Հոգեբանական աջակցության տրամադրում տեղահանված աշակերտներին: |
| Գործողություններ | Կլոր սեղան-քննարկումներ, սեմինարներ՝ տեղահանված տարբեր տարիքի սովորողների ընդհանուր մասնակցությամբ՝ միմյանց հետ շփումը արժևորելու նպատակով, թրեյնինգներ: Ծնողխորհրդում միջդասարանային ընդհանուր միջոցառումների նախատեսում: |
| Պատասխանատուներ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ համակարգող, աջակցող թիմ, ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ: |
| Միջոցներ | Մարդկային ռեսուրսներ: |
| Գնահատման չափանիշներ | Գործնականում խմբային աշխատանքի կազմակերպում, հարցաթերթիկներ: |
| Վերահսկողություն | Հետադարձ կապի պահպանում: Մշտական համագործակցությունը պահպանելուն ուղղված աշխատանքների կազմակերպում: |
| Ռիսկեր | Մասնակցելու ցանկության բացակայություն: |
| Ժամանակացույց | 2024-2025 թվականներ |

## 4 Հնարավոր ռիսկերը մեղմող գործողություններ

ՀՀ «Լոռու մարզի, ք. Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029 թվականների զարգացման հետևյալ ծրագրում

յուրաքանչյուր նպատակին հասնելու համար անհրաժեշտ գործողությունները, նյութատեխնիկական պայմանները, մարդկային ռեսուրսները ներկայացված են ելնելով ուսումնական հաստատության առկա իրավիճակից, կարիքներից և հնարավորություններից: Յուրաքանչյուր նպատակին հասնելու համար ներկայացված են գործողությունների քայլաշար՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը:

Հնարավոր ռիսկերը մեղմելու համար անհրաժեշտ է՝

- Պետական բյուջեից ստացված ֆինանսական միջոցների նպատակային բաշխում՝ ուղղված մանկավարժական համակազմի մասնագիտական ունակությունների բարձրացմանը:
- Ուսումնական հաստատության գործունեությունն իրականացնելիս գլխավորապես հիմնվել իրավական ակտերի, նորմատիվ փաստաթղթերի, հաստատության կանոնադրության վրա:
- Ուսումնական հաստատության ծնողական խորհրդի և ընդհանուր առմամբ ծնողական համայնքի դերի, ներգրավվածության բարձրացում:
- Ուսումնական հաստատության կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների համակարգված աշխատանք:
- Ուսումնական գործընթացում և արտադասարանական աշխատանքներում մշտադիտարկումների, քննարկումների, վերլուծությունների իրականացում:
- Յուրաքանչյուր սովորողի համար իր ընդունակությունների սահմանում կրթություն ստանալու հավասար պայմանների ստեղծում:
- Ֆինանսական, մարդկային, նյութատեխնիկական և ժամանակային ռեսուրսների ճիշտ և նպատակային օգտագործում:

## 5. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները

ՀՀ «Լոռու մարզի, ք. Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029 թվականների զարգացման հետևյալ ծրագրում

առանձնացված գործողությունների արդյունքները գնահատվում են ելնելով առանձնացված բաղադրիչի ուղղվածությունից՝

**Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման չափանիշ**

- ✓ Փոխադարձ և տնօրենության կողմից իրականացվող դասալսումների կազմակերպում:
- ✓ Չափորոշչահեն կրթության կազմակերպում: Ուսումնական հաստատությունում իրականացնել ուսուցում ելնելով առարկայական ծրագրերից և չափորոշիչներից:
- ✓ Գրավոր և բանավոր հարցումների միջոցով պարբերաբար ստուգել աշակերտների կողմից յուրացված գիտելիքների մակարդակը:
- ✓ Ներդպրոցական վերահսկողության պլանում ներառել գիտելիքների ստուգմանն ուղղված վիկտորինաների և մրցույթների կազմակերպման հարցը:
- ✓ Օգտագործելով տարբեր մեթոդներ, հնարներ բացահայտել սովորողների կրթական կարիքները և կազմակերպել աշխատանքներ այդ կարիքների բավարարմանն ուղղված:

**Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները**

- ✓ Վերապատրաստումների արդյունքում ձեռք բերված գիտելիքների, հմտությունների գործնականում կիրառելիության գնահատում:
- ✓ Դպրոցական ընդհանուր մշակույթի գնահատում ուսման, ինքնակրթության և մասնագիտական աճի ուղղությամբ:
- ✓ Ակնհայտ առաջընթաց ցուցաբերած մանկավարժների խրախուսման և պարգևատրման համակարգի առկայություն:

**Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները**

- ✓ Բուլինգի դեպքերի քանակի և ուղղվածության բացահայտում և քննարկում:
- ✓ Համադպրոցական և արտադպրոցական միջոցառումներում սովորողների մասնակցության բացահայտում, առաջարկությունների քննարկում և ընդհանրացում:
- ✓ Գնահատել մասնակցային սկզբունքով իրականացված ուսումնական հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման նպատակահարմարությունը և արդյունավետությունը:
- ✓ Իրականացնել գրավոր և բանավոր հարցումներ սովորողների և մանկավարժների շրջանում:

**Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշները**

- ✓ Գնահատել ուսումնական հաստատությունում հալածանքի, ոտնձգությունների դեմ քաղաքականության առկայությունը:
- ✓ Համացանցում առցանց բուլինգից, ոտնձգություններից խուսափելու համար առցանց վարքագծի վերանայում, կիբերհանցագործությունից պաշտպանվելու քայլաշարի իմացություն:
- ✓ Բացահայտել սոցիալական միջավայրից օտարված սովորողներին, խթանել վերոնշյալ սովորողների ներառման համար կազմակերպվող ծառայություններին:
- ✓ Բռնության դեպքերի կանխարգելման քայլաշարի վերանայում, դեպքերի քննարկումներ:
- ✓ Գնահատել ուսումնական հաստատությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, խնդիրներ նկատելու դեպքում կանխարգելել հիմնախնդրի արմատացմանը:
- ✓ Պարբերաբար իրականացնել թրեյնինգներ՝ ուղղված հալածանքի, օտարման և բռնության կանխարգելմանը:

**Ուսումնական հաստատություն-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ**

- Ուսումնասիրել, վերլուծել և կատարել նկատառումներ ուսումնական հաստատություն-համայնք համագործակցությամբ իրականացված միջոցառումների արդյունավետության մասին:
- Գնահատել ծնողխորհրդի և ամբողջ ծնողական համայնքի իրականացրած աշխատանքների նպատակայնությունը առկա հիմնախնդիրների լուծման գործում:
- Գնահատել ծնողների մասնակցությունը սովորողի ուսումնական գործունեությանը, ներգրավվածությունը ծնող-ուսուցիչ համագործակցային խմբերում:
- Վերլուծական մեթոդով, հարցաթերթիկների կիրառմամբ գնահատել արտադպրոցական և երկարօրյա ուսուցման իրականացումը:
- Գնահատել ուսումնական հաստատություն-համայնք, ուսումնական հաստատություն-ծնողական համայնք, ուսումնական հաստատությունում գործընկերային համագործակցության արդյունքները:

## 6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմը

§ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց¦ ՊՈԱԿ-ի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերահսկողությունը հիմնվելու է ծրագրում սահմանված նպատակներին հասնելու գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների վերլուծության և համեմատման արդյունքների վրա: Վերահսկողության և իրականացման պատասխանատվությունը կրում են նպատակներից բխող գործողությունների իրականացման համար առանձնացված պատասխանատուները:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագիրն ըստ էության հանդիսանում է դպրոցում իրականացվող աշխատանքների հենքային պլանը, որից ելնելով էլ կազմվում և իրականացվում է տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանը: Հաշվետվողականության մեխանիզմների ներդրումը կարևոր է ծրագրի նպատակների իրագործումն ապահովելու, ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործելու, գործողությունների քայլաշարը նպատակային կատարելու և շահառուների ներգրավվածության համար:

Ուսումնական հաստատության իրականացրած գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի աշխատակիցների, ծնողների և սովորողների կողմից իրականացված գնահատումն է: Գնահատման նպատակը իրականացվող աշխատանքների որակի բարձրացումն է, միտված է առավել լավ ուսումնադաստիարակչական միջավայրի ստեղծմանը:

Ուսումնական հաստատությունում պարբերաբար պետք է ներկայացվեն հաշվետվություններ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներին ու պահանջներին» համապատասխան (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի, N 35-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևին համապատասխան:

| No | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |
| | | | | | | | |

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարողականի մասին վերլուծությունները մանրամասն պետք է ներկայացնել դպրոցի կառավարման խորհրդի նիստում՝ ներառելով հաշվետվություններ, փաստացի տվյալներ:

Զարգացման ծրագիրը ենթակա է լրամշակման, փոփոխման՝ ելնելով օրենսդրական որոշ պայմանների փոփոխություններից, ժամանակի պահանջից և հանգամանքներից:

## 7. Օգտագործված գրականության ցանկ

- ‹‹ՀՀ Սահմանադրություն›› ,
- ‹‹Կրթության մասին›› օրենք
- ‹‹Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին›› ՀՀ օրենք,
- ‹‹ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ. ›› օրենքը,
- ‹‹Պետական հանրակրթական զարգացման ծրագրի մշակման պահանջների և ձևաչափի մասին›› ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման,
- ‹‹ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիր մինչև 2030թ››,
- ‹‹ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ի կանոնադրություն,
- ‹‹ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց ›› ՊՈԱԿ-ի ներքին գնահատման հաշվետվություններ,
- ‹‹ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Վ. Համբարձումյանի անվան թիվ 25 հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան: